

կաթողիկոսը և ոչ ալ Կողեոն կոչուած վարդապետը (որ միայն իր ժամանակին ղէպքերը արձանագրած է): Բառարանին մէջ յիշատակուած Յովհաննէս պատմիչը կը թուի խօսիլ շատ հնագոյն ժամանակներու մասին՝ Ե. դարէն առաջ, բաժնելով իր գործը հինգ զիրքերու: Հոն կը խօսուի հայկազանց շրջանին, Արշակունեաց հարստութեան վրայ, աւելի մանրամասն քան Խորենացին, ինչպէս որ կը տեսնուի մէջբերուած վկայութիւններու փշրանքներէն, անուններու յիշատակումէն, եւն: Հոն կը խօսուի նաև Հայկի և Բելլի ընդհարումներու մասին, կը տրուին բնական և աշխարհագրական տեղեկութիւններ հայ հողին, կը խօսուի ժողովրդական սովորութիւններու վրայ, եւն:

3) Մեսրոպ պատմիչ, որ չէ նոյն՝ Ժ. դարուն Մեսրոպ Երէցին հետ, հեղինակ պատմութեան մը, որ կը ծանրանայ գլխաւորապէս Մեծն Ներսէսի գործերուն վրայ: Այս Մեսրոպ պատմիչին ջով, ընդհակառակն, կը խօսուի հոսովայեցիներու, ինչպէս Գայրոս բղջիսի մը, լէգէոններու Միջագետք առաքումին վրայ, եւն: Կը խօսուի նաև հայ իշխաններէն Սմբատի մը վրայ՝ որ տիրած էր Մարաց երկրին, եւն:

4) Կայ նաև ուրիշ Մեսրոպ պատմիչ մը, որ ունի թթ. գլխահամարներով պատմութիւն մը, որոնց մէջ կը պատմուի Ս. Մեսրոպի վարքը, բոլորովին տարբեր Կորիւնի գործէն: Էջմիածնի ձեռագրաց ցուցակը ունի արդէն Ս. Մեսրոպի վարքին պատմութիւն մը Կորիւնի գործէն դուրս: Կրնայ հետեւաբար ըլլալ ճիշտ այդ յիշատակուածը:

5) Մատթէոս պատմիչ, որ կը պատմէ հնագոյն ժամանակներու ղէպքեր, քան ինչ որ մեզի ծանօթ Մատթէոս Ուռհայեցիի գործը: Սա կը սկսի իր պատմութիւնը 952 թուականէն և կը հասնի 1136:

Գլխակարգութիւններն ալ կը սկսի ԽԸ-էն, որ կ'ենթադրէ թէ գոյութիւն ունեցած է սկիզբի մաս մ'ալ: Եւ հաւանաբար, ըստ Ալիշանի, այդ սկիզբի մասերն են, որ Բառարանին մէջ յիշատակուած են, և զուցէ միեւնոյն հեղինակին ալ կը պատկանին:

6) Մխիթար պատմիչ մը՝ որ հաւանաբար նոյն է ըստ Ալիշանի՝ Սխիթար Այրիվանեցիին հետ:

7) Ստեփանոս պատմիչ, որ տարբեր կը թուի Ստեփանոս Ասողիկէն: Անոր պատմութեան նիւթն է աւելի հնագոյն ժամանակներ, Արտաշէս Բ.ի շրջանին ղէպքերը:

8) Զեկոբ պատմիչ՝ որ նոյն է Զենոբ Գլախին հետ: Գիտել կու տայ, սակայն, Ալիշան՝ որ հոն յիշատակուած վկայութիւնները չեն գտնուիր մեզի ծանօթ պատմութեան մէջ:

9) Եզնիկ Կողբացիին նուիրուած պատմութիւն մը կը յիշուի, շփոթուած զուցէ Յովհաննէս Երզնկացիի գործին հետ. բայց Ալիշան հաւանական կը համարի որ Եզնիկ եւս ունեցած ըլլայ պատմական գործ մը որ սակայն մեզի հասած չէ:

10) Անանուն Պատմարիւն Հայոց, որ ընդարձակ գործ մըն է մէկու մը՝ որ ֆիւսջած է անծանօթ: Սա միացուցած է ազգային պատմիչները խոշոր հատորի մը տակ, որ կը գտնուէր Սիս կամ Սաղմոսավանքին մէջ: Այդ պատմութեան մէջ խօսուած է հնագոյն ժամանակներու, հայկազանց շրջանին, Արշակունեաց հարստութեան վրայ, եւն: Ստեփանոս Ռոշքեան այս Անանուն պատմութիւն Հայոց-էն, կ'ըսէ Ալիշան, չորս հարիւր բառերու վկայութիւններ տուած է:

11) Կը յիշատակուին դեռ Մամբրէ վերձանոցի Պատմարիւն մը և Մեղկոդակակ գործ մը. այս վերջինէս մանաւանդ վկայութիւններ կը բերէ առատօրէն: